

ՊԱՏԳԱՄԱՏԱՐ

Բարեկենդանի կիրակիով, Եկեղեցւոյ խորանները վարագոյրով ծածկած, կը մտնեմք “ապաշխարութիւն” կոչուած ինքնաբերական քառասունօրեայ շրջան մը:

Ոչ թէ միայն ֆիզիքականի եւ հանոյքի եւ պահի ուտելիքներու մէջ սահմանափակելու համար մեր ապրելակերպը, եւ կամ որոշելով գրկել մենք գմեզ որոշ հանոյքներէ, որոշ մեղքի սովորութիւններէ, ծուլութենէ, ազահութենէ, չարակեզու բամբասանքէ, եւ Աստուծոյ ոչ-հանելի այն բոլոր ապրելակերպերէ որ մենք գիտեմք թէ վայել չէ Քրիստոնեայ մարդուն:

Այլ նաեւ անդրադառնալու համար այն բոլոր դրական կարողութիւններուն, շնորհներուն, պարտաւորութիւններուն, ապրելակերպին եւ հոգեկան հանոյքներուն, որոնք մեզմէ ամէն մէկուն սրտին ուզածն է: Եւ Աստուծոյ հանելին:

Մեզմէ ամէն մէկուն կը մնայ այդ դրական ինքնաբերական կատարել: Զարիքի արմատ Սատանայի ծուղակը չիլնալ, անոր խոստացած հրապոյրներէն չը խաբուիլ, այլ յիշել միշտ որ չարը, Սատանան, արդէն իսկ դատապարտուած է: Եւ վստահիլ Քրիստոսի խոստումին, որ Սուրբ Հոգին մեզի հետ պիտի ըլլայ միշտ, մեզի սորվեցնելու ճշմարտութիւնը եւ Աստուծոյ կամքը:

Պօղոս Առաքեալ իր նամակներուն մէջ զանազան թելադրութիւններ ունի Քրիստոնեայ անհատին եւ համայնքին գործունէութիւնը եւ առաքելութիւնը յատկանշող եւ քացատրող:

Կորնթոսի քրիստոնեաներուն ուղղած իր երկրորդ նամակին մէջ, շեշտելով իր եւ ամէն Քրիստոնեայի առաքելութիւնը, կ'ըսէ. “Մենք կ'ապրինք, կը գործենք իբրեւ դեսպաններ, պատգամատարներ Քրիստոսի:”

–Ո՛վ է դեսպանը, ո՛վ է պատգամատարը:

–Դեսպանը անձ մըն է որ դրկուած է մէկու մը կողմէ, որոշ գործ մը կատարելու, կամ պատգամ մը հաղորդելու:

Ո՛չ՝ ի՛ր ուզածը ընելու, կամ ի՛ր ուզածը խօսելու:

Ո՛չ՝ ի՛ր կամքը, այլ կամքը անո՛ր՝ որ զինք դրկեց:

–Եւ հետեւաբար պատգամատարը – այնքան գորաւոր է, ազդեցիկ է, որքան որ զինքը դրկողն է:

–Քրիստոնեան՝ Քրիստոսի՝ պատգամատարն է, դեսպանն է:

Այդ պատճառաւ Քրիստոնեան իր տկար անձին մէջ իսկ, այնքան գորաւոր է որքան զինք դրկողը: Ասոր ապացոյցը՝ մեր սուրբերն են, անոնց կեանքի պատմութիւնն է:

–Քրիստոնեան այն այնքան է, որ իր մեղաւորութեան գիտակցութեան մէջ, միշտ յայտն ունի փրկութեան:

–Իբրեւ Քրիստոսի պատգամատարը, ան կ'ապրի ընկերութեան մը մէջ որ օտար է Քրիստոսի եւ անոր ուսուցումներուն:

Հետեւաբար իր առաքելութեան մաս կը կազմէ, իր պարտականութիւնն է, սորվեցնել եւ դաստիարակել: Այդ ընկերութիւնը կրնայ իր անմիջական շրջանակը ըլլալ, միմեյն իսկ իր անմիջական ընտանիքի անդամները եւ բարեկամները: Զանոնք ճշմարտութեան քերելը այդ պատգամատարին պարտքն է:

Ասոր համար կ'ըսենք. “Եկեղեցին մեր դաստիարակ մայրն է:”

Ուրեմն պարտականություն ունի ծառայություն մատուցանելու: Միտով, հոգիով հիւանդ եւ տկար եղողներուն օգնելու, Գրիստոսի պատգամը տանելու:

—Այս բոլորը առանձնաշնորհումներ են մեզի տրուած, բայց նոյն ատեն ծանր պատասխանատուութիւն մեր ուսերուն դրուած:

—Մեր ամէն մէկ խօսքը, մեր ամէն մէկ գործը, մեր եկեղեցիին եւ մեր Տիրոջ պատգամը պիտի նկատուի, ուղղուած այն ընկերութեան որուն մէջ կ'ապրին: Եւ համաձայն մեր ցուցաբերած նկարագրին եւ հոգիին, կա՛մ պիտի օրհնեն, եւ կա՛մ պիտի քաջաբերեն ու անիծեն մեր ներկայութիւնը, եւ զա՛յն՝ որուն պատգամատարը դառնալու առանձնաշնորհումը ունինք:

Կը տեսնենք թէ ինչ ծանր պարտականութիւններու տակ կը դրուինք, որոնք սակայն երբ սիրով, համակրութեամբ եւ աշխտութեամբ հետապնդենք, բացայատ կը դառնայ թէ ո՛վ է հաւատարոք պատգամատարը, զինքը առաքողին կամքը հաւատարմօրէն ներկայացնողը:

Կը մնայ մեզ որոշել որ քառասունքայ այս շրջանին մեր ուշադրութիւնը, մեր հետաքրքրութիւնը ուր պիտի ուղղենք: Ուղղենք այն աղբիւրին որ մեզ պիտի գորացնէ, մեզ պիտի հաւատարիմ պահէ կատարելու այն բոլոր պարտականութիւնները որոնք գիտենք թէ մերն են, մեր ամենօրեայ պարտականութիւնները: Նաեւ յաւիտեական ճշմարտութիւնները հետապնդելու, ուսուցանելու, դաստիարակելու, ինչպէս քսուեցաւ, մեր ամփոփական շրջապատին մէջ, մեր ընտանիքին, մեր համայնքին անդամներուն հետ մեր ունեցած յարաբերութիւններու ընթացքին, կամ որեւէ մէկ շրջանակի մէջ ուր կը գտնուինք որ օտար է Գրիստոսի եւ անոր ուսուցումներուն: Ինչ ահաւոր պարտականութիւն ունինք մեր անձին օրինակով, մեր շարժումներուն, մեր նայուածքին, մեր խօսքին արտայայտութիւններովը ըսելու որ մենք պատգամատարն ենք:

Ատոր համար, քառասունքայ այս շրջանին, պիտի աղօթենք որ մեզմէ ամէն մէկը կարողացող ըլլայ Աստուծոյ խօսքը՝ Աստուածաշունչ Սուրբ Գիրքէն, եւ Պօղոս Առաքեալի անձնական եւ համայնական փորձառութիւններէն օգտուելով, մեզմէ ամէն մէկը իր կեանքին Աստուածահանոյ ուղեգիծը գտնէ, միշտ յիշելով որ ամէն Գրիստոնեայ կանչուած է պատգամատարը դառնալու Գրիստոսի: Եւ նկատուելու օրհնուած անձ մը իր ընտանիքին, իր համայնքին, իր ազգին եւ մարդկային ընկերութեան համար:

Այսպիսի հաւատարիմ պատգամատարներու բանակն է եկեղեցին: Եւ ատոր համար է որ եկեղեցին, մեր մայրը, մեզի կը յիշեցնէ որ միասին պէտք է աղօթենք, որպէս զի միասին փառաւորենք անունը Անոր որ մեզ պատգամատար ընտրած է փառքին համար Գրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյն:

Թ.Ա.Մ.